

փենք՝ իւր նենգաւոր վատութեանը
համար, և արժանի իսկ է ամեն դը-
ժնդակ չարեաց հանդիպելու. հապա-
մեղ նման գառնազգեստ գայլերու ինչ
պէտք է. . . : Ի՞նչ պիտի ընենք, երբ
Տէր Աստուած իւր փրկած հօտին այլ
ցերութիւն ընէ, եւ երբ մեղ նման
վարատող և ցրուող հովուաց վերայ
իւր արդար բարկութիւնը բռնկի. . . :

Անտարակոյտ խռիւի պէս պիտի սյ-
րէ մեր կիւրքերն աւ գործքերը և պիտի
խորտակէ, փշրէ և ցրուէ մեր հոգաւ-
տութիւնն ու ամբարտաւան խոր-
հուրդները: Փոխուիլ պէտք է Հաճի,
այս ճանապարհն ան ել է և վառն
գաւոր:

(Շարունակէ:)

Ա. Ռ. Ե. Ղ. Ծ ՈՒ Ա. Ծ

ԱՆՍԿԻԶԻՆ սկիզբն առի գոյութեան
Տիեզերաց դրաւ Աստուած զիս իշխան.
Ես գհամայնս ունիմ յանխախտ կայութեան,
Երանութեան ես եմ առնող մարդկութեան:
Ինեւ համայնք ՚ի յարգ ուղարգ կերպացան,
Առանց ինձի ցիրուցան է ամեն բան.
Ուր ես չի կամ մահագոյժ է անդ համայն,
Համայնք ինեւ կ'աճին, կ'սպրին, կ'ան և կեան:
Եթէ կուզես դու զիս ճանչնալ թէ ինչ եմ,
Քննէ գոյից բոլոր մասունքն, ես անդ եմ.
Խեղօք խորհէ, տես քեզմէ իսկ հեռի չեմ,
Ըրարիչս ալ զիս յայտնած է քեզ Յեզեմ:
Ինչո՞ւ դու միշտ ինձ դէմ զինիս մարդ ապուշ,
Չէ յաղթեր ինձ բնաւ մէկը, կաց զգոյշ.
Իմ ուժիս չափ դուն ալ կ'առնուս, բայց շատ ուշ.
Եւ այն ատեն ունայն են զիղջք, տուգանք, տոյժ,
Խիստ քաղցր է քեզ ինձ դէմ դնել վիստութեամբ
Բայց ես ըզքեզ ընում ապա գառնութեամբ.
Իմ նախնական հարուածք թէպէտ խիստ մեղմ են,
Բայց երթալով կը սաստիկանան՝ և անբոյժ են:
Ասկզեսպոսի որդիքն զքեզ կը խաբեն
Թէ որ խօսք տան, թէ քու ցաւըդ կը բուժեն,
Ես անողոք և մի անխաբ դահիճ եմ,
Բայց և գթոտ դարմանիչ ու սրաշտպան եմ:
Ես մի ակրող մեծ իշխան եմ զօրաւոր,
Ներհակողին այժը կընեմ ջարդ փշոր:

Եւ դայեակ եմ և մայր գթութ ընտրեցու ,
 Կը խնամեմ հպատակներս միշտ հըու :
 Կարծեմ գիտցար թէ ես ով եմ , ինձ լսէ .
 Սինէլ հիմայ կերած ապտակդ հերիք է .
 Շուտով դարձիր խոնարհամիտ հնազանդէ ,
 Գուցէ մոռնաս ցաւըդ , թէպէտ հնար չէ :

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն

Ս. Սխանսարեանցի տպագրութիւնների գինը այսուհետեւ . Տիֆլիս (Tiflis), սեպհական տանը , Հայոց Վանքի Սեմ և Փաբր փողոցների անկիւնում , եկեղեցւոյ հանդէպ ; Ս. Պետերբուրգ , իւր կացարանում , այսպիսի հասցէով .

—Russie , S.-Pétérshbourg , place Michel , maison N° 2—3 , de Gerbinne , log N° 5 , Michel Miansarof (Miansariantz) — և Ս. Պետերբուրգէն (ոչ Տիֆլիսէն) Ռուսաց տէրութեան ամենայն քաղաքները առաքելով , ճանապարհի (փոստայի) ծախսով հանգերձ ; Կ. Պոլիս , գրավաճառ Խրիստիան Բոտհ'ի մօտ , Պերա , Հաղօպուլտլօի անց (պասսաժ) , N° 32 , — Christian Roth , librairie étrangère , Constantinople , Grand Rue de Péra , Passage Hazzopulo , N° 32 .

Ռուսիայ . Կ. Պոլիս .
 Բ. Կ. Ֆր. Ա.

Վնար Հայկական , ընդարձակ երգարան հանդերձ զանազան Յաւերուածներով , ծանօթութիւններով և հայախօս առածներով (Lyre arménienne — recueil des chants) : Ս. Պետերբուրգ : 1868 , 8-ձալ , էջ 712 .
 Հայկական Վնարի այբբենական ցանկը առանձին աը պած 1870 թ. , 8-ձալ , էջ 32 , երկուսը միասին ,

մի օրինակ	1	30	7	—
հինգ օրինակ	5	—	30	—

Խնամատարութիւն երեխայոց Komb , — éducation des enfants) , — մարմնական և բարոյական , շարդրութիւն Կոմբ'ի , անգղիացւոց թագուհու բժշկի հանդերձ զանազան յաւերուածներով տպագրողի կողմից : Պետերբուրգ : 1868 թ. , 8-ձալ , էջ 300 .

մի օրինակ	—	80	4	—
հինգ օրինակ	3	50	14	—

Իդուարդ Լաբուլէի Ըղգային Կրթութիւն . ա) ինքնակրթութիւն , բ) ազգային կրթութիւն . գ) ժու